

նեցաւ Գրիգոր Տեան առած Մխիթարեան վանքէն
 շ. Ստեփան վ. ն իբր թարգման եւ Գաղատացի
 սարկաւագ մը, իբրեւ փոքրաւոր, եւ գնաց « առ
 ցանկալին ամենայն ազանց քրիստոնէից » . Տոն
 ամէնէն սէր եւ շատ յարգանք տեսաւ :
 Հոմ մնաց իբր ինն ամիս : Ս. Ժողովէն
 խնդրեց որ ծովեզերեայ քաղաք մը բնակի-
 թոյլ տրուեցաւ Անքոնա նստիլ : 1777 Ապրիլի
 մէջ Անքոնա գնաց, եւ Տոն բնակեցաւ իբր վեց
 տարի : Ընտելեալ խնդրեց Ս. Ժողովէն որ
 վ. բնետիկ բնակի, վասն զի Անքոնա փոքրիկ հայ
 մատուռ մը եւ քահանայ մը միայն կար, եւ
 ինքը տեղւոյն լեզուն ինչպէս նաեւ լատիներէն
 չէր հասկընար եւ դժուարութիւն կը կրէր :
 1782ին (Ապրիլ 24ին՝ թուղթ Ստեփ. Աբբ.
 առ Յարութիւն Աբբ. Բասնցի, Գիւ. Անտ.)
 վ. բնետիկ փոխադրուեցաւ, ուր Մխիթարեանց
 վանքը մնաց քանի մ'ամիս (18 Մայ. 1782,
 թուղթ Ստ. Աբբ. առ Յարութիւն Աբբ. Բա-
 սնցի, Գիւ. Անտ.), մինչեւ որ քաղաքին մէջ
 յարմար բնակութիւն գտաւ : Տեղւոյն Հայերէն,
 մանաւանդ Սեղբոսեան Յովհաննէս Մարքիզէն
 մեծ հիւրընկալութիւն տեսաւ :

Անտոնեան Հարց Մատենադարանին թիւ
 ԾԳ գրչագիր ձեռագրին իբրեւ պահպանակ
 դրուած նամակ մը գտայ. այս նամակը գրած են
 « Ստամբուլու » վեց եկեղեցեաց քահանայք եւ
 Ժողովուրդք առ նշանաւոր ոմն Գրիգոր վար-
 դապետ, որ երբեմն Կ. Պոլսոյ վրայ առաջնորդ
 օրհնուած եւ զայն հովուած էր, եւ սոյն գրու-